

## ՀՐԱՎԵՐ

### ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

#### «Ջրամատակարարման, ջրահեռացման և հիգիենայի (ՋՋՀ, WASH) վերաբերյալ իրազեկության արշավ» IRFSP/TA/CQS-2019/010

Հայաստանի Հանրապետություն

"Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Օրագիր

Խորհրդատվական Ծառայություններ՝ *Ընտրություն խորհրդատուի որակավորման հիման վրա*

ԳՋՄՀ Փոխառություն No 2000000779

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառու/ փոխառություն է ստացել Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամից /այսուհետ՝ ԳՋՄՀ/ "Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Օրագիրը /այսուհետ՝ ԵԳՖԱՕ / իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար:

#### **Օրագրի նկարագիր՝**

ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (ԳՏՁ ՕԻԳ) իրականացնում է գյուղական համայնքների զարգացման ծրագրեր: Ընթացիկ «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրի» (ԵԳՖԱՕ) նպատակն է բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական կարգավիճակն ընտրված գյուղական տարածքներում, որտեղ աղքատությունը տարածված է, ստեղծելով եկամուտների աճի և զբաղվածության ապահովման կայուն հնարավորություններ՝ գյուղատնտեսական արտադրության համակարգերի և ապրանքային մշակաբույսերի արտադրության արժեչողայի օղակների միջև առաջընթաց ու հետընթաց կապերի հզորացման ճանապարհով:

Օրագիրը ներառում է 5 հիմնական բաղադրիչ. (i) Գյուղական ֆինանսավորում, (ii) Գյուղական տարածքների ջրամատակարարման ենթակառուցվածքներ, (iii) Ֆերմերների իրազեկում և աջակցություն, (iv) Օրագրի կառավարում և (v) Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում:

#### **Առաջադրանքի նպատակ**

Սույն առաջադրանքի նպատակն է խթանել ջրամատակարարման, ջրահեռացման և հիգիենայի վերաբերյալ տեղեկացվածությունը Համայնքային ջրամատակարարում /ՀՋ/ ենթաբաղադրիչի շահառու հանդիսացող համայնքներում՝ նպաստելով տարբեր տարիքային խմբերի շրջանում հիգիենայի նորմերի և ջրի խնայողաբար օգտագործման վերաբերյալ տեղեկատվության տարածմանը, միաժամանակ ընդգծելով վարքի փոփոխության, ինչպես նաև ջրի խնայողության նպատակով տեխնոլոգիական նոր մոտեցումների անհրաժեշտությունը՝ մաքուր ջրի հավասարաչափ բաշխում ապահովելու նպատակով:

Այս նպատակով ՕԻԳ-ը կընտրի խորհրդատու՝ իրականացնելու համայնքային մակարդակով մոբիլիզացման աշխատանքներ՝ խթանելով և զարգացնելով ՋՋՀ-ի վերաբերյալ տեղեկացվածությունը բարելավված ՀՋ համակարգեր ունեցող 29 համայնքների երեխաների, դպրոցականների, երիտասարդների, կանանց և տղամարդկանց շրջանում:

#### **Իրականացվելիք հիմնական առաջադրանքներ**

Խորհրդատուն 29 համայնքներում պետք է իրականացնի հետևյալ հիմնական առաջադրանքները.

#### **Ա. Նախապատրաստման փուլ՝ Իրազեկման արշավների և տեղեկատվական նյութերի մշակում**

- Համայնքների մոբիլիզացում՝ պարզել համայնքներում ՋՋՀ-ի նախնական կարիքների շրջանակը՝ անցկացնելով ընդհանուր հարցում համայնքային մակարդակով, տարածել տեղեկատվություն առաջիկա միջոցառման մասին սոցիալական կայքերի, տեղական ինքնակառավարման ցանցերի միջոցով, պարզել շահառուների և մասնակիցների մոտավոր թիվը՝ բավարար քանակությամբ տպագիր նյութեր նախապատրաստելու նպատակով, համաձայնեցնել միջոցառումներին առնչվող կազմակերպական հարցերը.
- Պատրաստել ՋՋՀ-ի և ջրի արդյունավետ օգտագործման վերաբերյալ Power-Point ներկայացում՝ ՕԻԳ-ի հետ համաձայնեցված բովանդակությամբ և ձևաչափով՝ համայնքներում ցուցադրելու նպատակով.
- Կազմել և գունավոր տպագրել հիգիենայի և ջրի խնայողության եղանակների նկարագրությամբ հակիրճ թռուցիկներ (1-2 A4 էջ), որոնց վերջնական ձևաչափը պետք է համաձայնեցվի ՕԻԳ-ի հետ նախքան տպագրությունը (առնվազն 3000 տպաքանակով).
- «Հայջրմուղկոյուղու» կողմից տրված համապատասխան նյութերը ստանալով՝ Խորհրդատուն պետք է պատճենի և գունավոր տպագրի բուկլետները՝ (առնվազն 1000 տպաքանակով).
- Մշակել և ՕԻԳ-ի հետ համաձայնեցնել ՋՋՀ միջոցառման ձևաչափը և բովանդակությունը:

Իրականացման եղանակները և իրագելության բարձրացման վերաբերյալ նյութերը պետք է նախապես համաձայնեցվեն ՄԻԳ-ի հետ:

**Բ. Իրականացման փուլ՝ ՋՋ2 իրագելման արշավներ (միջոցառում) 29 համայնքներում**

- Տեղի պաշտոնյաների, գյուղապետարանների և համայնքի այլ ներկայացուցիչների հետ կազմակերպել և խթանել միջանձնային հաղորդակցման միջոցառումներ երեխաների, երիտասարդների, նրանց ծնողների ու խնամողների հետ՝ ձեռքերը լվանալու և հիգիենայի կուլտուրայի դաստիարակման նպատակով.
- Ապահովել ձեռքերի լվացման և հիգիենայի կուլտուրայի, ջրի կարևորության վերաբերյալ տեղեկատվական նյութերի տարածումը երեխաների և երիտասարդների շրջանում՝ միջանձնային հաղորդակցության միջոցառումներին աջակցելու համար.
- Կազմակերպել միջոցառում և ներկայացնել.
  - վարքագծի փոփոխության, ինչպես նաև տեխնոլոգիական նոր մեթոդների անհրաժեշտությունը (օրինակ՝ դույլերով կաթիլային ոռոգում սնամերձերում, գնդաձև լողաններով բաքեր գոմերում), ինչը մեծապես կնպաստի ջրի հավասարաչափ և արդյունավետ բաշխմանը, ինչպես նաև ջրի խնայողությանը.
  - ջրի խնայողության և պահպանման անհրաժեշտության, ինչպես նաև արդի տեխնոլոգիաների ու մոտեցումների վերաբերյալ միջոցառում.
  - Միջոցառման փաստագրում (լուսանկարահանում, տեսանկարահանում, միջոցառման վերաբերյալ հաշվետվություններ, GIS քարտեզավորում):

**Ներկայացման ենթակա հաշվետվություններ**

**Խորհրդատուն պարտավոր է ներկայացնել.**

- Մեկնարկային զեկույց, որտեղ մանրամասն կներկայացվեն սոցիալական մոբիլիզացման արշավների և իրագելման միջոցառումների կազմակերպման և իրականացման նկատմամբ կիրառվելիք ընդհանուր մոտեցումները, ներառյալ՝ 29 համայնքներում առաջարկվող աշխատանքների ժամանակացույցը.
- Մասնակիցների խմբերին տարատեսակ միջոցառումների միջոցով տրամադրվող տեղեկատվական նյութեր (բովանդակությունը և ձևաչափը).
- Համայնքների մոբիլիզացման արդյունքները և իրականացման պլան յուրաքանչյուր համայնքի համար:
- Եզրափակիչ հաշվետվություն, որը կներառի իրագելման միջոցառումների (կարճաժամկետ) արդյունքները, մարտահրավերները, քաղած դասերը, մասնակիցների տեսակետները և նրանց կողմից արված առաջարկները: Խորհրդատուից պահանջվում է տրամադրել շահառուների մասնակցության ապացույցներ և մասնակիցների վերաբերյալ ժողովրդագրական տվյալներ (այդ թվում՝ տնային տնտեսությունների բնութագրեր):

Իրագելության բարձրացման արշավները պետք է իրականացվեն աշխարհագրական քարտեզավորմամբ (geo-referenced): Աշխարհագրական քարտեզավորմամբ տվյալները պետք է ներառեն քարտեզներ, անվանացանկ և համայնքների աշխարհագրորեն տեղայնացված գտնվելու վայրերը (նշված Աշխարհագրական տեղեկատվական համակարգում՝ GIS):

**Խորհրդատուին ներկայացվող պահանջներ**

- Աշխատանքային փորձ կրթական միջոցառումների նախագծման, պլանավորման և աջակցության գործում, մասնավորապես՝ կարողությունների զարգացման, երեխաների կազմակերպման և մասնակցության, դպրոցական և համայնքային մակարդակներում նորարարական և ստեղծարար մոտեցումների կիրառմամբ հանրային տեղեկատվական արշավների իրականացման ոլորտներում.
- Մոնիթորինգի և գնահատման, հաշվետվությունների կազմման և փաստաթղթերի ներկայացման կարողություններ.
- Վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն մեկ նմանատիպ աշխատանքային փորձ:

**Խորհրդատուի հիմնական անձնակազմի որակավորումն ու փորձը**

- Մագիստրոսի աստիճան հիդրոտեխնիկական ճարտարագիտության, առողջապահության, հիգիենայի և բնապահպանական ոլորտներում, գյուղական համայնքներում հանրային իրագելման արշավներ մշակելու և իրականացնելու ապացուցված փորձ:

- i. Տեղական ազգային կազմակերպությունների և պետական գերատեսչությունների հետ արդյունավետ փոխգործակցության փորձ.
- ii. GIS-ի կիրառման փորձ.

- iii. Հայերեն և անգլերեն բանավոր և գրավոր հաղորդակցական լավ հմտություններ.
- iv. Վերլուծական և հաշվետվություններ գրելու գերազանց հմտություններ:

**Ընտրության չափանիշները հետևյալն են.**

Չափանիշը	Բալերը
Ընկերության ընդհանուր փորձը (տարիների քանակը) համապատասխան ոլորտում	10
Վերջին հինգ տարիների ընթացում կնքված նմանատիպ պայմանագրերի քանակը	10
Հիմնական աշխատակազմի ընդհանուր փորձը և որակավորումը	20
Հիմնական աշխատակազմի ծրագրին առնչվող փորձը և որակավորումը	50
Լեզվի հմտությունը	10

Հետաքրքրության հայտը ներկայացվում է հայերեն, 1 բնօրինակ և 1 պատճեն:

Աշխատանքների իրականացման ենթադրվող ժամկետը՝ մոտ 3 ամիս:

Խորհրդատուն ընտրվելու է ԳԶՄՀ-ի կողմից 2019թ. <https://www.ifad.org/documents/10180/cd15e696-26e2-45df-abcc-3d4611a9a20b/> սեպտեմբերին հրապարակված Գնումների ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով ժամը 09.00-18.00: Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2019թ. դեկտեմբերի 16-ը, ժ. 17.00:

**“Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի  
իրականացման գրասենյակ” ՊՀ  
Գնումների բաժնի պետ՝ Արթուր Գրիգորյան  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, 6 հարկ;  
Հեռախոս՝ 374 10 – 54 – 65 – 10; Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 – 58; e-mail: [procurement@raed.am](mailto:procurement@raed.am)**